

## ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՐՈՄԵՏՐ 2012

### Հետազոտության համառոտ նկարագրությունը

Կովկասյան բարոմետրը (ԿԲ) Եվրասիա համագործակցություն հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) ծրագրի տարածաշրջանային ամենամյա նախագծերից է, որի նպատակը հարավկովկասյան երկրներում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունն է: Արժանահավատ տվյալների միաժամանակյա հավաքագրումը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնային տնտեսություններում իրականացվում է 2004թ-ից ի վեր և շարունակական հնարավորություն է ընձեռում իրականացնելու նաև միջերկրային համեմատություններ՝ բացահայտելով տարածաշրջանի երկրներում դիտարկվող երկարաժամկետ միտումները: 2006թ-ից ի վեր հետազոտություններն ընդգրկում են ինչպես մայրաքաղաքներն, այնպես էլ այլ քաղաքային և գյուղական բնակավայրերը<sup>1</sup>:

### Հարցման գործիքը

Հարցաթերթը մշակվել է Հարավային Կովկասի երեք երկրների փորձագետների կողմից և տարեցտարի վերանայվել է. ավելացվել են նոր հարցեր, բացառվել են որոշ, ոչ այնքան արդյունավետ հարցեր, փոխնիփոխ ներկայացվել կամ հանվել են որոշ հարցախմբեր: Հիմնական հարցաթերթը պարունակում է Հարավային Կովկասի երկրներում ժողովրդագրական, սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացումների վերաբերյալ մոտ 100 հարց: 2012 թվականի հարցաթերթը հարստացվել է Իոսիֆ Ստալինի, Հայոց ցեղասպանության և Հայ-թուրքական հարաբերությունների նկատմամբ վերաբերմունքը բացահայտող հարցաշարով:

### Հարցման մեթոդաբանությունը

ԿԲ-2012-ի ժամանակ ևս կիրառվել է բազմաստիճան կլաստերային ընտրանքը՝ ընդգրկելով չափահաս բնակչությունը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում՝ բացառությամբ հակամարտությունների տարածքների: Յուրաքանչյուր երկրի սահմաններում տարանջատվել են մայրաքաղաքային, քաղաքային և գյուղային մակրոստրատաներ, յուրաքանչյուրը բաժանելով հյուսիսարևելյան, հյուսիսարևմտյան, հարավարևելյան և հարավարևմտյան աշխարհագրական տարածաշրջանների: Ընտրանքի առաջին փուլում տնային տնտեսությունների քանակի համամասնություններով պատահականորեն ընտրվել են ընտրատեղամասերը, հաշվարկվել է յուրաքանչյուր տեղամասում հարցման ենթակա տնային տնտեսությունների թիվը: Երկրորդ փուլում թիրախային տնային տնտեսությունների թիվը որոշարկվել է սիստեմատիկ քայլքի մեթոդով: Վերջին՝ երրորդ փուլում, հարցվողների ընտրության համար կիրառվել է Քիշի աղյուսակը: Դեմ առ դեմ հարցազրույցներին 2012թ. մասնակցել է 6715 հարցվող (2384՝ Հայաստանում, 1829՝ Ադրբեջանում և 2502՝ Վրաստանում):

### Տվյալների հասանելիությունը

Հարցաթերթը, ցուցադրաքարտերը, ընտրանքի մեթոդաբանության մանրամասն նկարագրությունը, հավաքագրված տվյալների բազան (SPSS ֆորմատով) և որոշ արդյունքներ տեղակայված են ՀՌԿԿ տարածաշրջանային կայքում՝ [www.crrccenters.org](http://www.crrccenters.org), ինչպես նաև ՀՌԿԿ-Հայաստանի կայքում՝ <http://crrcc.am/index.php/lo/14/164>: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՌԿԿ-Հայաստան:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է՝ հիմնադրված 2003թ. Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունները խթանելու նպատակով: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և տեղական առաջատար բուհերի (Հայաստանում՝ Երևանի պետական համալսարանի) գործակցությամբ հիմնված ծրագիրը գիտնականներին և քաղաքական գործիչներին առաջարկում է հետազոտությունների, դասընթացների և տարածաշրջանային համագործակցության լայն հնարավորություններ: ՀՌԿԿ ծրագրերի վերաբերյալ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՌԿԿ-Հայաստան:

ՀՌԿԿ-Հայաստան՝  
Երևան 0025,  
Աբովյան 52, 3-րդ  
հարկ, հեռ. /ֆաքս՝ 581330,  
581450,  
էլ. փոստ՝ [crrcc@crrcc.am](mailto:crrcc@crrcc.am),  
վեբ-կայք՝ [www.crrcc.am](http://www.crrcc.am):

<sup>1</sup>Հարցումներ չեն անցկացվել Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանում, Աբխազիայում և Հարավային Օսիայում: